

ՀՆՏ 796.01.09

DOI: 10.53068/25792997-2024.3.13-156

**ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊՐՈՖԵՍԻԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Վ. Ռ. Նազարյան

*Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարան, Վանաձոր, Հայաստան*

Առանցքային բառեր: Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստություն, պրոֆեսիագիր, բուժքույրեր, մանկաբարձուհիներ, դեղագործներ, ատամնատեխնիկներ, շարժողական ընդունակություններ, հոգեշարժիչ որակներ:

Հետազոտության արդիականություն: Արդի ժամանակաշրջանում, բարձրագույն և միջին մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների հետ, փոփոխվում է նաև տարբեր բնագավառների մասնագետների պատրաստման բովանդակությունը: Վերջինս առաջացնում է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ վերանայելու մասնագիտական կրթության արդյունավետությունը բարձրացնող ճանապարհները:

Սովորողների ընտրած մասնագիտական գործունեության և նրա առանձին աշխատանքի տեսակների առարկայական պատրաստումը ներկայումս դարձել է ֆիզիկական դաստիարակության, կրթության և առողջապահության ոլորտի աշխատակիցների մասնագետների խիստ ուշադրության առարկան:

Ըստ այդմ՝ հատուկ նշանակություն է ստանում տարբեր մասնագիտական որակավորում և մասնագիտացում ստացող ապագա մասնագետների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը (ՊԿՖՊ), որի ներգործությունը սերտորեն կապված է որակավորման, մասնագիտական ընդունակությունների և հմտությունների զարգացման, անձի սոցիալական որակների հետ: Դրա հետ մեկտեղ աշխատանքային գործունեությունը պահանջում է ընտրած մասնագիտությանը համապատասխան հատուկ ֆիզիկական պատրաստվածություն: Դա որոշում է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության սոցիալ-տնտեսական կարևոր նշանակությունը և նրա հիմնախնդիրների հետազոտումները:

Մասնագիտական ուղղվածության ֆիզիկական դաստիարակության հիմքում ընկած է նրա ընդհանուր զարգացնող և առողջարար ներգործությունը: Սակայն աշխատանքի յուրահատկության հետ չկապված ֆիզիկական պատրաստությունը կարող է ոչ թե դրական ազդեցությո-

յուն ունենալ մասնագիտության տիրապետման հարցում, այլև դժվարացնել մասնագիտական որակների և հմտությունների ձևավորումը[1,2,6,15]: Ուստի, ֆիզիկական դաստիարակության դերը, որպես պարտադիր դասավանդման առարկա, նկատելիորեն բարձրանում է և դառնում մասնագիտական գործունեությանը նպաստող ֆիզիկական պատրաստության համակարգ: Սրանից կարելի է եզրակացնել, որ մասնագիտության արդյունավետ տիրապետման համար անհրաժեշտ են գիտականորեն հիմնավորված համակարգ և պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկա:

Կան բազմաթիվ հետազոտություններ՝ ուղղված տարբեր բնագավառի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության մշակմանը [2,4,8,]:

Չնայած պրոֆեսիոնալ-կիրառական ուղղվածություն ունեցող ֆիզիկական դաստիարակության խնդրի խիստ ուշադրությանը, մինչև այսօր որոշ մասնագիտություններ մնում են քիչ հետազոտված: Դրանց թվին են պատկանում նաև միջին բժշկական անձնակազմի մասնագիտությունները:

Բազմաթիվ գրական աղբյուրների վերլուծությունից հետո հաջողվեց հայտնաբերել մի շարք աշխատանքներ՝ կապ-

ված միջին բժշկական անձնակազմի պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության և մեթոդիկայի հետ, թեև կան առանձին հետազոտություններ, որտեղ այդ հարցերը դիտարկված են բժիշկների առանձին կատեգորիաների համար՝ վիրաբույժներ, դեղագործներ, թերապևտներ [4,6,9,11,12,14]: Մյուս կողմից այսօր մանկավարժական և բժշկական դպրոցի առջև դրված հիմնախնդիրն առողջապահության մասնագետների պատրաստության որակի բարձրացումն է: Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հիմնախնդրում, կապված ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործման հետ, մանկավարժական գիտությունում շարունակվում են մնալ մի շարք չլուծված հարցեր: Առ այսօր քիչ են մշակված կիրառական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման տեսամեթոդական հարցերը, որոնք նպաստում են ապագա միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների մասնագիտական արդյունավետ գործունեությանը: Հետևաբար, անհրաժեշտ է ֆիզիկական վարժությունների նպատակահարմար համակարգի մշակումը դիտարկել ոչ միայն որպես առողջության վերականգման միջոց, այլև մասնագիտական աշխատունակությանը և ուսուցման գործընթացի ակտիվացմանը նպաստող գործոն, որոնք ուղղված են միջին բժշկական անձնակազմի աշխատողների մասնագիտական կարևոր

որակների և ընդունակությունների կատարելագործմանը:

Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը մասնագիտացված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված առաջատար շարժողական ընդունակությունների, շարժողական հմտությունների և օրգանիզմի ֆունկցիաների մշակմանը, որոնք նպաստում են միջին բժշկական անձնակազմի ընտրված մասնագիտությանն առավել արդյունավետ տիրապետելուն և հետագայում նրանում կատարելագործվելուն:

Ուստի, ապագա բուժքույրերի, մանկաբարձուհիների, դեղագործների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության և պրոֆեսիագրի կազմման ուղիների հիմնավորումը խիստ կարևոր խնդիր է և ընդգծում է տվյալ հետազոտության արդիականությունը:

Մարդու մասնագիտական գործունեության ընթացքում հատուկ նշանակություն է տրվում պրոֆեսիագրի (профессионала) մշակմանը և ստեղծմանը: Պրոֆեսիագրի սոցիալական, հոգեբանական և այլ պահանջների համակարգված նկարագրություն է, որը ներառում է կոնկրետ մասնագիտություն՝ ելնելով այս պահանջներից, որ անհրաժեշտ են տվյալ գործունեությամբ զբաղվող անձի որակների համար և, ի վերջո, կազմում են մարդկանց պրոֆեսիոնալ պիտանելիության հիմքը [1,3,4,]:

Համեմատական պրոֆեսիագրության խնդիրն է՝ հայտնաբերել տարբեր տեսակի աշխատանքային գործունեության առավել ընդհանուր գծեր և աշխատանքային գործունեության տարբեր տեսակները բնորոշող առանձնահատկություններ [1,4,5,7,13]:

Գիտական գրականության մեջ կան պրոֆեսիոնալ աշխատանքի բազմաթիվ դասակարգումներ, որոնք հիմնված են տարբեր գլխավոր հատկանիշների վրա՝ էներգածախսեր, ֆիզիոլոգիական ֆունկցիաներ և այլն [2,3,5]:

Ըստ գրական աղբյուրների վերլուծությունների՝ հնարավոր է դառնում նաև պրոֆեսիագրին ներկայացվող պահանջների որոշումը պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության տեսանկյունից [4,5,8,9,10,13,15].

1. արտադրական գործընթացի բնութագիր,
2. աշխատանքի սանիտարական պայմանների նկարագրություն,
3. շարժողական ընդունակություններին և հմտություններին ներկայացվող պահանջներ,
4. հոգեշարժիչ որակներին ներկայացվող պահանջներ:

Հետազոտության նպատակը: Որոշել միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության և պրոֆեսիագրի կազմման ուղիները:

Հետազոտության խնդիրները: Ուսումնասիրել միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների մասնագիտական կարևոր շարժողական ընդունակությունները և հոգեշարժիչ որակները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ մասնագիտական գրականության և տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրում, մանկավարժական դիտարկումներ և թեստավորում, մաթեմատիկական վերլուծություն: Հետազոտությունները կազմակերպվել են Վանաձորի պետական բժշկական քոլեջում, մասնակցել են 207 ուսանողներ (170 աղջիկ և 37 տղա) և 175 մասնագետներ, որոնց միջին տարիքը 39.5 տարեկան է, աշխատանքային ստաժը՝ 17 տարի, այդ թվում՝ 80 բուժքույր, 34 մանկաբարձուհի, 31 դեղագործ, 30 ատամնատեխնիկ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Մասնագիտական գրականության և տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրումը, մանկավարժական դիտարկումները ցույց տվեցին, որ կոնկրետ մասնագիտության ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մշակման ընթացքում՝ նրա ընդհանուր դրույթները, որոնք բացահայտվել են նմանատիպ մասնագիտությունների խմբերի համար, պետք է լրացվեն մանրազնին հետազոտություններով: Տվյալ դեպքում պետք է հաշվի առնել միջին բժշկական անձնա-

կազմի աշխատակիցների գործունեության մասնագիտական առանձնահատկությունները [1,4,6,11,14]:

Դիտարկումները ցույց են տվել, որ բուժքույրերի, մանկաբարձուհիների, դեղագործների և ատամնատեխնիկների աշխատանքը բնութագրվում է աշխատանքային հնարքների կատարման որոշակի հաջողականությամբ, օրվա ընթացքում աշխատանքի սինխրոնությամբ, նյարդահուզական լարումով, իսկ դեղագործների և ատամնատեխնիկների աշխատանքն առանձնանում է աշխատանքային դիրքերի նույնությամբ, աշխատանքային գործողությունների և շարժումների միալարությամբ:

Գրական աղբյուրների և մանկավարժական դիտարկումների վերլուծության հիման վրա որոշվել են միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների հետևյալ մասնագիտական կարևոր շարժողական ընդունակությունները և հոգեշարժիչ որակները (աղ. 1):

Առանձնացված առավելապես կարևոր շարժողական ընդունակությունները և հոգեշարժիչ որակները արտացոլում են այն պահանջները, որոնք ներկայացվում են դիտարկվող մասնագիտություններին և կազմում են նրանց պրոֆեսիոնալիզմի հիմքը: Հենց դրանք են դրվել բուժքույրերի, մանկաբարձուհիների, դեղագործների և ատամնատեխնիկների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակության և պրոֆեսիագրի կազմման հիմքում:

Աղյուսակ 1

Բժշկական աշխատակիցների մասնագիտական կարևոր շարժողական ընդունակությունները և հոգեշարժիչ որակները

| Ընդունակությունները և որակները | Բուժ-քույրեր | Մանկաբարձներ | Դեղագործներ | Ատամնատեխնիկներ |
|---|--------------|--------------|-------------|-----------------|
| Շարժողական ընդունակություններ | | | | |
| Շարժումների ճշգրտություն և կոորդինացիա | + | + | | + |
| Մատների և դաստակների ճարպկություն | + | | + | + |
| Մկանային ճիգերի տարբերակում | + | + | + | + |
| Վերին վերջույթների դիմացկունություն | | + | + | + |
| Իրանի և ստորին վերջույթների ստատիկ դիմացկունություն | | | + | + |
| Ուժային դիմացկունություն | + | + | | |
| Հոգեշարժիչ որակներ | | | | |
| Ուշադրության կենտրոնացում և կայունություն | + | + | + | + |
| Շոշափողական զգայունություն | | | + | + |
| Դինամիկ և ստատիկ տրեմոր | | | + | + |
| Շարժողական հիշողություն | + | + | + | + |
| Տեսողական լարվածություն | + | + | + | + |
| Հուզական լարվածություն | | + | | |

Հաջողվեց պարզել, որ միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների մասնագիտական գործունեությունն ունի ընդհանուր բնութագրային գծեր: Այսպես՝ շարժումների կոորդինացիան, ուշադրության կենտրոնացումը, ընդհանուր դիմացկունությունն առաջին հերթին անհրաժեշտ են հատկապես դեղագործ-

ներին, ատամնատեխնիկներին, բուժքույրերին և մանկաբարձուհիներին: Կարևոր նշանակություն ունի նաև նրանց դաստակի և մատների նուրբ շարժունակությունը: Շարժումների ճշգրտությունը, մկանային ճիգերի տարբերակման ունակությունն առավելապես անհրաժեշտ են բուժքույրերի, մանկաբարձուհիների և ատամնատեխնիկների համար: Դինամիկ

և ստատիկ տրեմորները դեղագործների, ատամնատեխնիկների, բուժքույրերի և մանկաբարձուհիների անհրաժեշտ որակներից են, իսկ չափավոր ուժային դիմացկունությունը՝ նստակյաց աշխատանքային դիրք ունեցող աշխատակիցների համար (դեղագործներ և ատամնատեխնիկներ):

Պարզվեց նաև, որ միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների աշխատանքին բնորոշ յուրահատկությունն այն է, որ նրանց ամբողջ աշխատանքային գործունեությունն անցնում է փակ աշխատավայրերում: Այնտեղ հատկանշական է չչափավորված աշխատաժամանակը (բուժքույրեր, մանկաբարձուհիներ), նստած դիրքով տևողական հարկադրաբար մնալը (դեղագործներ, ատամնատեխնիկներ): Վերջիններիս համար այդպիսի դիրքում երկար գտնվելը լուրջ խնդիրներ է առաջացնում իրանի և ստորին վերջույթների մկանների ստատիկ դիրքի պահպանման գործում: Բնական է, որ նրանց անբավարար զարգացվածությունը կարող է ժամ առաջ առաջացնել հոգնածություն, մարմնի կազմվածքի խախտում և իրանի ծռումներ:

Հարկադրված աշխատանքային դիրքը՝ մշտապես թեքված գլխով և ծալված ձեռքերով, որպես կանոն բերում է ողնաշարի պարանոցակրծքային բաժնի նշանակալի գերձանրաբեռնվածության: Դա հաճախ օստեոխոնդրոզի պատճառ է դառնում: Նստակյաց աշխատանքային

դիրքը սակավ հոգնեցնող է, քան կանգնածը, և որոշ դեպքերում կարող է դիտարկվել որպես ավելի հարմար, քանի որ հնարավորություն կա թուլացված վիճակում պահել ներքին վերջույթների մկանները (դեղագործներ, ատամնատեխնիկներ): Նստած դիրքով երկարատև աշխատանքը՝ (դեղագործներ և ատամնատեխնիկներ) հատկապես թեքված իրանով, աշխատակիցների մոտ բացի պարանոցի և մեջքի մկանների հոգնածությունից կարող է առաջացնել կենսարգելակման երևույթների զարգացում՝ ստորին վերջույթներում, որովայնի և կոնքի շրջաններում, ուսագոտու և մեջքի տարածիչ մկանների ձգման և թուլացման: Վերջինս առաջացնում է կազմվածքի խախտումներ (ուսերի ասիմետրիկություն, իրանի ծովածություն, թիակների դուրսցում): Այսպիսի սահմանափակ շարժողական ակտիվությունը նվազեցնում է մասնագիտական աշխատունակությունը, առաջացնում է մեծաքանակ սխալներ, բացասական ազդեցություն է ունենում օրգանիզմի կենսական կարևոր ֆունկցիաների և համակարգերի վրա:

Եզրակացություն: Այսպիսով՝ ապագա մասնագետների բարձր աշխատունակությունը պահպանելու համար անհրաժեշտ է մշակել մասնագիտական կարևոր շարժողական ընդունակություններ և հոգեշարժիչ որակներ:

Միջին բժշկական անձնակազմի աշխատակիցների գնահատմամբ մասնա-

գիտական գործունեությունը յուրովի պահանջներ է ներկայացնում մասնագիտական հատուկ շարժողական ընդունակություններին՝ շարժումների ճշգրտությանը և կոորդինացիային, մկանային ճեղքերը տարբերակելու ունակությանը, ձեռքերի մատների մանր մոտորիկային, ստորին վերջույթների ստատիկ դիմացկունությանը, ուշադրության առանձնահատկություններին՝ ծավալ, կայունություն, կենտրոնացվածություն, հուզական լարվածությանը՝ տրեմոր՝ տեսողական զգայություններին:

Պրոֆեսիագրի չափորոշիչների համակարգում, միջին բժշկական անձնակազմի գնահատմամբ, ըստ մասնագիտությունների՝ առանձնանում են մասնագիտական պատրաստությունը և աշխատունակությունը բարձրացնող հետևյալ կարևոր որակները և ընդունակությունները.

ա. բուժքույրեր և մանկաբարձուհիներ՝

➤ մատների և ուսագոտու շարժումների ճշգրտություն,

➤ շարժումների ճարպկություն և ճշգրտություն, մկանային ճեղքերի տարբերակման ունակություն,

➤ նյարդահոգեկան օպտիմալ լարվածության մակարդակ՝ անսպասելի իրավիճակներում արագ կողմորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու կարողություն:

բ. դեղագործներ և ատամնատեխնիկներ՝

➤ մարմնի պահանջվող դիրքի տևական հաղթահարում՝ իրանի առաջ թեքումով,

➤ ստորին վերջույթների և հենաշարժողական ապարատի ստատիկ լարվածության ու հոգնածության հաղթահարում,

➤ ձեռքերի մատերի և դաստակների նուրբ կոորդինացիա պահանջող տարբերակված միկրոշարժումների կատարում՝ լարված տեսողության և ուշադրության վերահսկողությամբ:

▣ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նազարյան Վ. Ռ., Բժշկական քոլեջների սովորողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկական, Մեթոդական ձեռնարկ, Վանաձոր, «Արմինֆո», 2009, 68 էջ:
2. Նազարյան Վ. Ռ., Պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկայի հինավորումը բժշկական քոլեջներում, Թեկն. աստեն. սեղմագիր, Երևան, 2013, 23 էջ:
3. Абульханова К.А., с соавт., Педагогика и психология: учебное пособие. М., «Совершенство». 1998, 311ст.

4. Андреева Н.В., Особенности профессиограммы среднего медицинского персонала и риски его профессиональной деформации // Медицина и экология, 2015, № 4, с. 102-105.
5. Вишневецкая Н.Л., Плахова Л.В. Профессиограмма как интегральная модель оценки пригодности персонала для обеспечения безопасности производства // Фундаментальные исследования, 2014, № 8 (часть 4), с. 801-805.
6. Дьяченко А.П., Профессионально-прикладная физическая подготовка студентов-стоматологов: Автореф. дисс... к.п.н., Киев. 1997, 22 с.
7. Згрусский В.С., Человек и профессия. М., «Знание», 1972, 32 с.
8. Карцев И. Д., с соавт. Физиологические критерии профессиональной пригодности. М., «Медицина», 1977, 213 с.
9. Норина В. Н., Профессиограмма врача // Образовательный портал «Справочник». — Дата последнего обновления статьи: URL [https:// spravochnick.ru/psihologiya/professiogramma_vracha/](https://spravochnick.ru/psihologiya/professiogramma_vracha/) (16.03.2024).
10. Рюмина Т.В., Основания проектирования профессиограммы врача, осуществляющего педагогическую деятельность в сфере здравоохранения // Мир науки. Педагогика и психология, 2022, Т 10. №6, с. 1-13.
11. [Старостенкова Т.А.](#), Профессиология и образование специалистов фармацевтической отрасли, // Психолого-педагогические исследования, 2014. Том 6. № 2. с. 209-218.
12. Старостенкова Т.А., Проблемы подготовки специалистов фармацевтической отрасли: взгляд профессиолога, // Российская ассоциация негосударственных образовательных учреждений, Негосударственное образовательное учреждение «Современный Гуманитарный Институт», ООО «Современное образование» ISSN: 1609-4646, 2014, № 7, с. 109-118.
13. Сысоев В.Н., Будко Д.Ю., Плохотюк Е.Н., Прогнозирование успешности профессиональной деятельности специалистов в сфере оказания фармацевтических услуг // Современные проблемы науки и образования, 2016, № 3, с. 157-163.
14. Ткачев Ф.Т., О профессионально-прикладной физической подготовке студентов-медиков. в сб.: Материалы научной конф. М., 1976, с. 21-28.
15. Шеховцова Е.А., Профессиограмма как инструмент формирования п х качеств студентов-педагогов // Ученые записки Санкт-Петербургского университета технологий управления и экономики, 2021, № 1(73), с. 14-19. профессионально важны.

DEVELOPING A PROFESSIONOGRAM OF MEDICAL WORKERS FROM THE
POINT OF VIEW OF PROFESSIONALLY APPLIED PHYSICAL TRAINING

V. R. Nazaryan

Vanadzor State University after

H. Tumanyan, Vanadzor, Armenia

ABSTRACT

Keywords: professionally applied physical training, professionagram, nurses, midwives, pharmacists, dental technicians, motor abilities, psycho-motor qualities.

Research relevance: In the modern era, in connection with the reform of higher and secondary vocational education systems, there is a notable shift in the content of training specialists in various fields. This trend causes an objective need to review the improvement of the effectiveness of vocational education.

In accordance with this, professional and applied physical training (PAPT) of future specialists receiving various professional competencies and specializations, the influence of which is closely related to qualifications, the development of professional abilities, skills and social qualities of a person, acquires special importance. At the same time, work requires special physical training related to the chosen profession. Consequently, This determines the socio-economic importance of professionally applied physical training, taking into account the analysis of relevant problems.

Research aim: The purpose of the study is to determine the content and methods of compiling professionally applied physical training for paramedical personnel.

Research methods and organization:The research includes study of professional literature and information sources, pedagogical observations and testing, mathematical analysis. The study was carried out at Vanadzor State Medical College: more than 207 students and 175 specialists took part in it, the average age is 39.5 years, 17 years' work experience; among them – 80 nurses, 34 midwives, 31 pharmacists, 30 dental technicians.

Research result analysis: Observations have shown that the work of nurses, midwives, pharmacists and dental technicians is characterized by a certain sequence of working techniques, synchronicity of work throughout the day, nervous tension, at the same time, the work of pharmacists and dental technicians is characterized by monotony of working position, monotony of working actions and movements.

Based on the analysis of relevant literature and pedagogical observations, we have identified the most important professional motor abilities and psychomotor qualities of the paramedical staff.

Individual motor abilities and psychomotor qualities reflect the requirements for these specialties and form the basis of their professional activities. They provided a substantial basis for the development and compilation of occupational profiles within the framework of professionally applied physical training of nurses, midwives, pharmacists and dental technicians.

Conclusion: Thus, in order to develop abilities and maintain high performance in future specialists, it is necessary to develop important professional motor skills and psycho-motor qualities.

According to the assessment of the medical staff, professional activity imposes special requirements on professional special motor abilities, which are expressed in accuracy and coordination of movements, the ability to recognize muscle cramps, the use of fine motor skills of the fingers, static endurance of the lower extremities, features of attention, volume, stability, concentration, emotional stress, causing tremor of the visual senses.

СОСТАВЛЕНИЕ ПРОФЕССИОГРАММЫ МЕДИЦИНСКИХ РАБОТНИКОВ С ТОЧКИ ЗРЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНО-ПРИКЛАДНОЙ ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ

В. Р. Назарян

*Ванадзорский государственный университет
имени О. Туманяна, Ванадзор, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: профессионально-прикладная физическая подготовка, профессиограмма, медицинские сестры, акушерки, фармацевты, зубные техники, двигательные способности, психомоторные качества.

Актуальность исследования. В современную эпоху, в связи с реформированием системы высшего и среднего профессионального образования, меняется и содержание подготовки специалистов различных областей. Эта тенденция вызывает объективную необходимость пересмотра повышения эффективности профессионального образования.

В соответствии с этим особое значение приобретает профессионально-прикладная физическая подготовка (ППФП) будущих специалистов, получающих различные профессиональные компетенции и специализации, влияние которых тесно связано с квалификацией, развитием профессиональных способностей, навыков и социальными качествами человека. В то же время трудовая деятельность требует специальной физической подготовки, связанной с выбранной профессией. Это определяет социально-

экономическую значимость профессионально-прикладной физической подготовки с учетом анализа соответствующих проблем.

Цель исследования. Определить содержание и методы составления профессионально-прикладной физической подготовки работников среднего медицинского персонала.

Методы и организация исследования. Изучение профессиональной литературы и информационных источников, педагогические наблюдения и тестирования, математический анализ. Исследование было проведено в Ванадзорском государственном медицинском колледже: в нем приняли участие более 207 студентов и 175 специалистов, средний возраст которых составляет 39.5 лет, стаж работы – 17 лет; среди них – 80 медицинских сестер, 34 акушерки, 31 фармацевт, 30 зубных техников.

Результаты исследования. Наблюдения показали, что работа медицинских сестер, акушерок, фармацевтов и зубных техников характеризуется определенной последовательностью выполнения рабочих приемов, синхронностью работы в течение дня, нервным напряжением, вместе с тем работа фармацевтов и зубных техников отличается однообразием рабочего положения, монотонностью рабочих действий и движений.

На основе анализа соответствующей литературы и педагогических наблюдений нами определены важнейшие профессиональные двигательные способности и психомоторные качества среднего медицинского персонала.

Отдельные двигательные способности и психомоторные качества отражают требования, предъявляемые к данным специальностям, и составляют основу их профессиональной деятельности. Они явились содержательной основой для разработки и составления профессиограмм в рамках профессионально-прикладной физической подготовки медицинских сестер, акушерок, фармацевтов и зубных техников.

Краткие выводы. Таким образом, для развития способностей и поддержания высокой работоспособности у будущих специалистов необходимо развивать важные профессиональные двигательные навыки и психомоторные качества.

По оценке среднего медицинского персонала, профессиональная деятельность предъявляет особые требования к профессиональным специальным двигательным способностям, которые выражаются в точности и координации движений, умении распознавать мышечные судороги, использовании мелкой моторики пальцев, статичной выносливости нижних конечностей, особенностям внимания, объему,

устойчивости, концентрации, эмоциональному напряжению, вызывающему тремор зрительных органов чувств.

Տեղեկություններ հեղինակի մասին

Վաղինակ Ռոբերտի Նազարյան՝ մ.գ.թ., Արվեստի և սպորտի ամբիոնի դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Վանաձոր, Հայաստան, E-mail: vaghinaknazaryan77@gmail.com, ORCID: 0009-0003-4698-9328

Information about the author

Vaginak Robert Nazaryan, Phd of Pedagogy, Associate Professor of the Department of Arts and Sports, Vanadzor State University after H. Tumanyan, Vanadzor, Armenia; E-mail: vaghinaknazaryan77@gmail.com, ORCID: 0009-0003-4698-9328

Հոդվածն ընդունվել է 25.08.2024–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 26.08.2024–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան